ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/21

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 13.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մսի պահածոյի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ մրցույթ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ն:

«Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ մսի պահածոյի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել նաև «Արցախբանկ» ՓԲԸ-ի կողմից 18.01.2018թ. տրամադրված թիվ 115/12/01 բանկային երաշխիքը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 22.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ քննարկել է «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի

«Աքվատիկ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտի ապահովման բանկային երաշխիքները և որոշում է կայացրել մերժել նրանց հայտերը:

Մասնավորապես, 2.3 կետով արձանագրվել է նաև հետևյալը. «Հանձնաժողովի գնահատող անդամները՝ Վ. Գասպարյանը, Ա. Մարգարյանը և Տ. Հարոյանը կողմ քվեարկեցին, քանի որ ըստ նրանց՝ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի, «Աքվատիկ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտի ապահովման բանկային երաշխիքները չեն համապատասխանում 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին: Հանձնաժողովի գնահատող անդամներ Լ. Մաղաքյանը և Ս. Նիկոլյանը դեմ քվեարկեցին, քանի որ ըստ նրանց՝ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի, «Աքվատիկ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտի ապահովման բանկային երաշխիքները համապատասխանում են հրավերի պահանջներին:»:

Փաստորեն, «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացնելիս՝ գնահատող հանձնաժողովի թվով 5 անդամներից՝ 2-ը դեմ են քվեարկել հայտերը մերժելու որոշման դեմ, քանի որ ըստ նրանց՝ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի, «Աքվատիկ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտի ապահովման բանկային երաշխիքները համապատասխանում են հրավերի պահանջներին: Իսկ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 9-րդ ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ապահովումը սույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

2. Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Մրցույթի հրավերը նույնպես նախատեսում է, թե հայտի ապահովում, թե պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջները և պայմանները:

Այսպես, մրցույթի հրավերի 2.3 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Հրավերի 4-րդ կետի 4.3 կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, ապա հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Ընդ որում, եթե բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7-րդ բաժինը ամբողջությամբ նվիրված է հայտի ապահովման կարգավորմանը: Այսպես, հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա դրանում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

Հրավերի 10-րդ բաժինը նվիրված է պայմանագրի ապահովման կարգավորմանը: Այսպես, Հրավերի 10.1 կետի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու

պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում: Նույն հրավերի 10.2 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ սույն ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

Հրավերի 12-րդ հավելվածը նվիրված է մասնակցի կողմից ներկայացվող բանկային երաշխիքին, ընդ որում, վերոհիշյալ հավելվածի 1-ին կետի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ սույն երաշխիքը հանդիսանում է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում, այլ կերպ ասած պայմանագրի ապահովում, այլ ոչ թե հայտի ապահովում:

ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված է երաշխիքի օրինակելի ձև: Վերոհիշյալ երաշխիքի օրինակելի ձևի ուսումնասիրությունից երևում է (1-ին կետ), որ այդ երաշխիքը հանդիսանում է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում, այլ կերպ ասած պայմանագրի ապահովում, այլ ոչ թե հայտի ապահովում:

Վերոհիշյալ փաստերի համադրումից պարզ է դառնում, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանզի ըստ գնահատող հանձնաժողովի՝ վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովումը (բանկային երաշխիքի ձևով ներկայացված) չի համապատասխանել ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին, մինչդեռ ՀՀ կառավարության վկայակոչված որոշմամբ հաստատվել է պայմանագրի ապահովման օրինակելի ձևը, այլ ոչ թե հայտի ապահովման օրինակելի ձևը: Մասնավորապես, «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի առաջին հատվածում նշված է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթից բխող պարտավորությունների կատարման ապահովում (հայտի ապահովում), իսկ ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևի առաջին կետում նշված է՝ կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում (պայմանագրի ապահովում):

Միևնույն ժամանակ, հրավերի 12-րդ կետով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևը նույնպես վերաբերում է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովմանը, այլ ոչ թե հայտի ապահովմանը:

Այսպիսով, գտնում ենք, որ նման պայմաններում, չի կարող արձանագրվել, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտի ապահովումը՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևի և մրցույթի հրավերով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևի պահանջներին, քանզի վերջիններս չեն սահմանում հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու որևէ օրինակելի ձև:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած «Արցախբանկ» ՓԲԸ-ի կողմից 18.01.2018թ. տրամադրված թիվ 115/12/01 բանկային երաշխիքը, ըստ էության, բավարարում է անգամ ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևի և մրցույթի հրավերով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևի պահանջներին, հանդիսանում է պատշաճ ֆինանսական փաստաթուղթ և կարող է հիմք հանդիսանալ բանկի կողմից բենեֆիցարին պահանջված գումարը անհապաղ վճարելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուսումնասիրելով վերոշարադրված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բանկային երաշխիքը համապատասխանում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէր մերժման, ուստի «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելիս՝ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով կայացրած որոշումը՝ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

2. Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բանկային երաշխիքը գնահատել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Խորհուրդը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթ հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, «Արցախբանկ» ՓԲԸ-ի 18.01.2018թ. կողմից «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ին տրված E1800001 բանկային երաշխիքը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը մսի պահածոյի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 22.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով որոշել է մերժել «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը 2011թ. օգոստոսի 11-ի թիվ

1145 որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հայտի ապահովման բանկային երաշխիքը 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145 որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Մինչդեռ, ըստ բողոքաբերի ՀՀ կառավարության վկայակոչված որոշմամբ հաստատվել է պայմանագրի ապահովման օրինակելի ձև, այլ ոչ թե հայտի ապահովման, և չի կարող արձանագրվել, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտի ապահովումը՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևի և մրցույթի հրավերով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևի պահանջներին:

Բողոքի քննության նպատակով 02.03.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց այն փաստը, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145 որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին և հայտնեց, որ հենց դա էլ պատճառ է հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար:

«Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է բանկային երաշխիք՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԱՐՑԱԽԲԱՆԿ

ք. Ստեփանակերտ 18.01.2018 N 115/12/01

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ E1800001

«Ընդունելով ի գիտություն, որ ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետ՝ Բենեֆիցիար/ հետ կնքվելիք ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթից բխող պարտավորությունների կատարման ապահովման (հայտի ապահովում) նպատակով «Էլիտ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն /այսուհետ՝ Պրինցիպալ/ պարտավոր է ներկայացնել բանկային երաշխիք 118.724.200 /մեկ հարյուր միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով /այսուհետ՝ Երաշխիքային գումար/ «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ Երաշխավոր/ ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալ ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ հետ համապարտ պարտապան, ի ապահովումն

նշված մրցույթին մասնակցելուց բխող Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից նշված մրցույթին մասնակցելուց բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Բանկը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահանջված գումարը՝ երաշխիքային գումարի սահմաններում, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարին, առանց Բանկին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Բանկի՝ ՀՀ Կենտրոնական բանկում կամ ցանկացած թղթակից բանկում բացված ցանկացած այլ հաշվից:

Սույնով Բանկը հանձնարարում է Կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերին, սույն երաշխիքի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Բանկի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը՝ սույն երաշխիքի բնօրինակը ներկայացնելու դեպքում:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Բանկի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 12 հուլիսի 2018թ.:

Վարչության նախագահ Ա. Բալայան

Գլխավոր հաշվապահ Ռ. Խաչատրյան»:

ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթի Հրավերի Հավելված 12-ով սահմանվել է երաշխիքի ստորև ներկայացված ձևը.

«Հավելված 12

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԲՁԲ-7/2»* ծածկագրով

բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N_____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ... (անունը, ազգանունը կամ անվանումը) (այսուհետ՝ բենեֆիցիար) և ... (այսուհետ՝ պրինցիպալ) միջև (անունը, ազգանունը կամ անվանումը) ... (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) կնքված N ... (պայմանագրի համարը) պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ... (երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել ... (գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո ... (օրերը՝ թվերով, տառերով) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի (բանկի անվանումը) ... բանկում բացված ... (բանկային հաշվի համարը)

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) մինչև (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ ...

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը (օրերը՝ թվերով տառերով) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա

երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ ... չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

_____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը):»:

«Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելու ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարներին՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիքը պահանջել սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

նախագահին «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիք պահանջելիս հիմք ընդունել սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևը:

Նույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևը ներկայացված է ստորև.

«Հավելված

ՀՀ կառավարության 2011 թվականի

օգոստոսի 11-ի N 1145-Ն որոշման

ԵՐԱՇԽԻՔ N_____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ... (անունը, ազգանունը կամ անվանումը) (այսուհետ՝ բենեֆիցիար) և ... (այսուհետ՝ պրինցիպալ) միջև (անունը, ազգանունը կամ անվանումը) ... (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) կնքված N ... (պայմանագրի համարը) պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ... (երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել ... (գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո ... (օրերը՝ թվերով, տառերով) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի (բանկի անվանումը) ... բանկում բացված ... (բանկային հաշվի համարը)

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) մինչև (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ ...

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը (օրերը՝ թվերով տառերով) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից

փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ ... չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

_____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը):»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. N244-Ա հրամանով հաստատվել է բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը:

Նշված հրամանով հստատված հրավերի օրինակելի ձևի թիվ 12 Հավելվածով սահմանվել է ստորև ներկայացվող երաշխիքի ձևը.

«Հավելված 12

«-ԲՄԱԲՁԲ-/-» ծածկագրով

բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N_____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ... (անունը, ազգանունը կամ անվանումը) (այսուհետ՝ բենեֆիցիար) և ... (այսուհետ՝ պրինցիպալ) միջև (անունը, ազգանունը կամ անվանումը) ... (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) կնքված N ... (պայմանագրի համարը) պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ... (երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել ... (գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո ... (օրերը՝ թվերով, տառերով) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի (բանկի անվանումը) ... բանկում բացված ... (բանկային հաշվի համարը)

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) մինչև (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ ...

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը (օրերը՝ թվերով տառերով) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ ... չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

_____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը):»:

Օրենքի՝

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի՝ 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով :

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի՝ իրավական ակտը պետք է մեկնաբանվի դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակելու նպատակով որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145 որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին, ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. N244-Ա հրամանով հաստատված բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման

հրավերի օրինակելի ձևի թիվ 12 Հավելվածով սահմանված երաշխիքի ձևին, ինչպես նաև ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 12 Հավելվածով սահմանված երաշխիքի ձևին:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը, «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքը ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145 որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին չհամապատասխանելու հիմնավորմամբ մերժելով՝ գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է «Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի այն հիմնավորմանը, որ ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145 որոշմամբ հաստատվել է պայմանագրի ապահովման երաշխիքի օրինակելի ձևը, այլ ոչ թե հայտի ապահովման երաշխիքի օրինակելի ձևը, անհիմն է, քանի որ նշված որոշումը պայմանագրի ապահովման երաշխիքին վերաբերող որևէ սահմանում կամ հղում չի պարունակում, այլ հստակ սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարները «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում առհասարակ պետք է երաշխիքը պահանջեն նույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլիտ Գրուպ» ՍՊԸ-ի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ